ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԵՐ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Սույն թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը նշեց «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 75-ամյա հոբելյանը:

Հեղինակավոր հանդեսի բազմամյա գործունեությունը լուսաբանեցին և ըստ արժանվույն գնահատեցին անվանի գիտնականներ, ռազմական գործիչներ և հանրապետության բուհերի ճանաչված դասախոսներ:

Սա մեր ամենահին պարբերականն է, որն անցել է մեծ ճանապարհ: Այն ստեղծման օրվանից նվիրված է եղել հայագիտության տարբեր ոլորտների լուսաբանմանը: «Լրաբերը» միշտ բարձր մակարդակի վրա է և ընդունված՝ գիտական հանրության կողմից:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Լրաբերը» միշտ եղել է այն հանդեսը, որը նյութեր է տպագրել հայագիտության բոլոր ոլորտների մասին: Շատ քիչ են հայալեզու այն պարբերականները, որոնք 75 տարվա կյանք են ունեցել և շարունակում են գոյատևել:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական
Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը հանրապետությունում ճանաչված հայագիտական և հասարակագիտական հրատարակություններից է, որ տասնամյակների ընթացքում արժանի հեղինակություն է նվաճել ոչ միայն հայրենական գիտության շրջանակներում, այլև արտերկրում: Հանդեսը շարունակում է մնալ հատկապես հայ պատմագիտական մտքի՝ տևական ժամանակի ընթացքում իր հաստատած ավանդութային արժեքների կրողը՝ արդիական շունչ և բովանդակություն հաղորդելով տպագրվող նյութերին:

«Լրաբերը» ակադեմիական առաջին հանդեսն է, որն իրականացնում է օտար լեզուներով նյութերի հրատարակումը՝ առաջ մղելով հայագիտության զարգացմանը նպաստող շնորհակալ աշխատանքը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

«Լրաբերը» ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում սպասված և փնտրված հայագիտական հանդես է, որի հոդվածներն աչքի են ընկնում մասնագիտական բարձր մակարդակով և հրապարակված նյութերի հրատապությամբ: «Լրաբերի» տարեցտարի աճող վարկանիշը ապահովվում է շնորհիվ հմուտ և բազմափորձ գլխավոր խմբագրի և ժրաջան, իր գործին հոգով ու սրտով նվիրված փոքրաթիվ կոլեկտիվի անձնվեր աշխատանքի:

Խորին գոհունակություն է պատճառում այն փաստը, որ հանդեսը մշտապես էջեր է հատկացնում արվեստագիտական հոդվածներին. նախկինում՝ «Ճարտարապետություն և արվեստ», ներկայումս՝ «Մշակույթ և արվեստագիտություն» բաժիններում հրատարակվել են մեր վաստակաշատ արվեստաբաններից ու երիտասարդ գիտնականներից շատերը:

Վստահ եմ, որ տարիների հեռվից եկած համագործակցությունը հետագայում ևս շարունակվելու, առավել խոր ու բազմակողմանի է դառնալու:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ա. Վ. ԱՂԱՍՅԱՆ

«Լրաբերի» էջերում աճել և հա-սունացել են հայագետների և հասարա-կագետների, այդ թվում՝ պատմաբանների բազմաթիվ սե-րունդներ: Հանդեսին աշխատակցում են ոչ միայն հայրենական, այլև Սփյուռքի և օտարազգի բազմաթիվ գիտնականներ: Այստեղ տպագրվում են հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով հայագիտական նյութեր: Հանդեսը տարածվում է արտասահմանյան տարբեր երկրներում:

Ուրախությամբ պետք է նշել, որ հանդեսի գլխավոր խմբագիրներն ու խմբագրական կազմը անցած յոթ ու կես տասնամյակների ընթացքում նվիրումի և մաքառումի շնորհիվ կարողացել են ապահովել «Լրաբերի» լուրջ ու ծանրակշիռ տեղը ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև արտասահմանյան մի շարք երկրների հանդեսների շարքում:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան
Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ

Գիտնականների ավագ և միջին, իսկ վերջին տասնամյակներին նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչների համար միշտ էլ պատիվ է եղել «Լրաբերում» տպագրվելը: Ղարաբաղյան շարժումը, ազգային ինքնագիտակցության զարթոնքը թարմ շունչ հաղորդեցին «Լրաբերի» գործունեությանը: Անվարան կարելի է ասել, որ այն դարձավ շարժման գիտական հիմնավորման առաջամարտիկը և սատար կանգնեց նրան:

Պարբերականը տասնամյակներ շարունակ ներկայացրել ու ներկայացնում է ԳԱԱ-ի դեմքը, լայն հասարակությանը ծանոթացնում Ակադեմիայի գիտական արտադրանքին: Անցնելով գիտահրատարակչական փառավոր ուղի՝ պարբերականը դարձել է մեր (և ոչ միայն մեր) երկրի գիտական կադրերի պատրաստման հայտնի դպրոց: Հաղթահարելով բազում դժվարություններ՝ հանդեսը շարունակում է իր գեղեցիկ ու բարի ավանդույթները:

Բանասիրական գիտությունների դոկտոր,
«Պատմաբանասիրական» հանդեսի գլխավոր
խմբագրի տեղակալ Ա. Հ. ԶԱՔԱՐՅԱՆ

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը յոթ և կես տասնամյակ է, ինչ ընթանում է հանրապետության հայագիտական և հասարակագիտական մտքի առաջավոր շարքերում՝ որպես ակադեմիական լիարժեք հրատարակություն: Հանդեսը հարգված և սիրված է ընթերցողների կողմից. այն իր ամբողջության մեջ լուրջ գիտական գիտելիքներ է հաղորդում ընթերցողներին և դրան համընթաց բարձրացնում իր գիտահրատարակչական որակները: Հանդեսը անում է հնարավորը՝ միջազգային հայագիտությանը ներկայացնելու հայրենական գիտության այդ ճյուղի ձեռքբերումները, գործի դնելով իր

աշխատակազմի ու խմբագրական խորհրդի ազնիվ ջանքերն այս ուղղությամբ: Անկասկած է՝ հանդեսն արդի հայագիտական լավագույն հրատարակություններից է, որ շարունակում և զարգացնում է մեր հանրապետության ակադեմիական լավագույն ավանդույթները՝ կանգնած լինելով մեր Ազգային ակադեմիայի պատմության ակունքներում: Հանդեսին ի սրտե ցանկանում եմ հայագետների նորանոր սերունդների աշխատակցությունը, ինչպես նաև հարատևում՝ իր հայրենանվեր անդաստանում:

Մոսկվայի Լոմոնոսովի անվ. պետական համալսարանի
պատվավոր դասախոս Կ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Արցախյան պատերազմին մասնակցել են, մեր ազատամարտի համաժողովրդական շարքերում, բազմաթիվ մտավորականներ՝ իրենց անկորնչելի ավանդը ներդնելով ազգովին ձեռք բերված հաղթանակի գործում: «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը մի հայտնի չափով իր պատվավոր մասնակցությունն ունի այս ամենի մեջ՝ փորձության այդ տարիներին ներկայացնելով Արցախի պատմությունը, հոգևոր և մտավոր ներդրումները մեր ժողովրդի հնամյա տարեգրության հոլովույթում և տեսականորեն սատարելով հայկական վերջին ազատամարտին: Այն, որ «Լրաբերը» հավատարիմ է եղել իր հայրենասիրական ուղեգծին, վկայում է նրա 1988 թ. իններորդ համարը, որ արգելվեց ժամանակի գրաքննության կողմից՝ նույն իսկ արցախյան հիմնախնդիրը համարձակորեն լուսաբանելու համար: ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շնորհավորում եմ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսին՝ իր 75-ամյակի առթիվ՝ ցանկանալով հայագիտական հետագա արգասաբեր ընթացք:

Գեներալ-մայոր, ՀՀ պաշտպանության
նախարարությանն առընթեր բարձրագույն սպայական
հանձնաժողովի նախագահ Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ